ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

« 08» «Մայիսի » 2019թ.
ժամը 11:00

1. «ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Ա.Գաբրիելյան)

1.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ իր կողմից հաստատված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի hmc_snto@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2019 թվականի ապրիլի 29-ին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ՝ Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանը և «Սեգ» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչը գերազանցում է «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ ենթակետով նախատեսված սահմանաչափը՝ ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը գերազանցող:

3. Հանձնաժողովը որոշեց՝

(Ա.Գաբրիելյան)

3.1. Հիմք ընդունելով կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ առաջարկել առաջին տեղն զբաղեցրած Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանին և «Սեգ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն ժամկետանց հարկային պարտավորությունների մասին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրված անհամապատասխանությունը՝ ինչը կարող է շտկվել Ա Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանի և «Սեգ» ՍՊԸ-ի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, կամ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից տրված նոր տեղեկատվությամբ:

3.2. Հանձնաժողովի քարտուղարին՝ ծանուցել Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանին և «Սեգ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը և ճշտված տեղեկատվությունը ներկայացնել hmc_snto@mail.ru էլեկտրոնային հասցեին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

(Ա.Գաբրիելյան)

4.1. «ՇՄՄՏԿ-ԳՀԱՊՁԲ-19/12» ծածկագրով մրցույթի մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2019 թվականի մայիսի 13-ին, ժամը 11:00-ին՝ք.Երևան, Չարենցի 46,4-րդ հարկ,46 սենյակ:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա.Գաբրիելյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա.Գաբրիելյան

_____ Ռ.Կոստանյան

Քարտուղար՝ _____ Շ.Ավագյան